

11375

Герингову училище с
целью привлечь куратор
предприятий и учреждений

3 (02)

P - 16

117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133

ՔԱՂՊԱՐԱՊՈԽԵՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ

ԳՆԴԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

ՅԵՎ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խարբուջությանք՝ Ն. Ե. Խորիոնովի

ՊԵՏՐՈՎ

ՅԵՐԵՎԱՆ

ԹԱԶԱՐԱՏԱԲԱԴԻՆ

1933 թ.

3/02 ԱԿ
Բ-16

25 SEP 2006

ՔԱՂԴԱՐՄՈՒԽՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
1 DEC 2009

ԳՆԴԱՑԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՅԵՎ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

38

Խմբագրությամբ՝ Ն. Ն. Խարիտոնովի.

1. Գրոլեսարհատի դիկտատուրան
2. Համ ԿԿ (բ) յեզ Խորհրդային իշխանության
ազգային բաղաքականությունը



ԹԵՏՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ

ՌԱԶՄԱՐԱՏԲԱԺԻՆ

1988 թ.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԻԱ

Բուրժուազիայի դիկտատորան ու պրոլետա-
րիատի դիկտատորան

ԲՈՒՐԺՈԱԶԻԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՄԵՔԵՆԱ ՑԵ
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՃՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կապիտալիզմի որոք հասարակությունը բաժան-
վում է յերկու թշնամական, անհաշտ բանակի:

Մի բանակը բուրժուազիայի բանակն է, վորն իր
ձեռքում կենտրոնացրել և արտադրության բոլոր մի-
ջոցները — ֆարբիկներն ու գործարանները, հողը, հան-
քերը, մեքենաները:

Մյուս բանակը պրոլետարիատի բանակն է. նրա
կողմումն են իրավազրկությունն ու աղքատությունը.
Բանվոր գասակարգը, զուրկ լինելով արտադրության
միջոցներից ու գործիքներից, ստիպված է համաձայ-
նել ստրկության, ստիպված է աշխատել կապիտալիստ-
ների համար, այլ կերպ նրան սպասում է սովամահու-
թյունը:

Անչափ մեծ վիճ կա այդ յերկու դասակարգերի՝
բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև: Անհաշտ և
անխնա յե պայքարը նրանց միջև: Կապիտալիստները
ձգտում են քամել բանվորներից վորքան հնարավոր
շատ շահույթ և ամեն կերպ ուժեղացնում են շահադր-
ծումը: Բանվոր գասակարգը մարմնչում է շահադրծ-
ման գեմ, պայքարի յե լինում կապիտալիզմի դեմ:

Կապիտալիզմի զարդացումն ավելի ու ավելի ուժեղ չափով և սրում դասակարգային պայքարը պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև։ Դասակարգային հակասությունների աճման հետ աճում և բանվորական ժամանակների վրդովմունքը, ամրանում և նրանց կամքը դեպի պայքարը, աճում և նրանց հեղափոխական ինքնագիտակցությունը, ամրանում և նրանց հավատը դեպի սեփական ուժերը, դեպի վերջնական հաղթանակն ընդդեմ ճնշողների։

Բուրժուազիան բռնության ու խարեյության բոլոր սիջոցներով ձգտում է պահպանելու իր իշխանությունը։

Իր սեփականությունը պահպանելու, բանվոր դասակարգի կապիտալիստական շահագործումը պահպանելու համար բուրժուազիան կազմակերպում է իր պետությունը։ Բանակի, վոստիկանության, պարլամենտի, դատարանի, մամուլի, յեկեղեցու, դպրոցի ոգնությամբ, վորոնք պահպանմ են ի հաշիվ աշխատավորներից քամզող շահույթների ու հարկերի, մի բուռ հարուստներ պահպանում են իրենց իշխանությունն աշխատավորների միլիոննավոր մասսաների նկատմամբ, պապակովում են իրենց համար նրանց ճնշելու ու շահագործելու հնարավորությունը։

Սակայն բուրժուական պետությունն ու նրա լակեյները, —սոցիալ-ֆաշիստները, —ձգտում են սքովել բուրժուական պետության իսկական եյությունը, նրա դասակարգային բնույթը։

Կապիտալիստներն ասում են, վոր իրենց պետության մեջ իշխում են «ազատությունը, հավասարությունն ու յեղբայրությունը», վոր նրանց զեկավարում են «ժողովրդի ներկայացուցիչները», վոր բոլոր քաղա-

քացիները «հավասար են որենքի հանդեպ» և հավասարակես կարող են վայելել այսպես կոչվող «ղեմոկրատական» ազատություններ՝ խոսքի, մամուլի, ժողովների և այլ ազատություններ։

—Բանվոր դասակարգը կարող է առանց հեղափոխության ել իշխանության գլուխ անցնել, բավական է միայն ստանալ պարլամենտում տեղերի մեծամասնություն, —ձայնակցում են կապիտալիստներին նրանց հավատարիմ սպասարկուները՝ սոցիալ-ֆաշիստները։

Այս բոլոր խոսակցություններն ամենալկտի խաբեյություն են, վորոնց նպատակն ե՝ չեղել պրոլետարիատին հեղափոխական ուղիից և ամրացնել բուրժուազիայի տիրապետությունը, նրանց հարստությունը և աշխատավորներին շահագործելու և ճնշելու իրավունքը։

Բուրժուական «ղեմոկրատական» պետություններում իրոք ընտրողների մեծամասնությունը կազմում են բանվորներն ու գյուղացիները։ Բայց պարլամենտ են անցնում բացառապես բուրժուազիայի ու կալվածատերերի ներկայացուցիչները։ Անդլիայում, որինակ, 615 պատգամավորների կիսից ավելին (328 հոգի) բանկիրներ, առևտրականներ ու արդյունաբերողներ են, մնացած պատգամավորները՝ կալվածատերեր ու սպաներ (57 հոգի), փաստաբաններ (137 հոգի), ժուրնալիստներ, բժիշկներ, աստիճանավորներ (61 հոգի և, վերջապես՝ 32 պատգամավոր արհմիությունների աստիճանավորներ (չինովնիկներ)։

Նույն պատկերն են նաև ֆրանսիայում, վորտեղ 611 պատգամավորից միայն 22-ն ե բանվոր, իսկ մնացածը պատկանում է շահագործողների դասակարգերին։

Մամուլը, պրոպագանդն ու ազիտացիան, դրամա-

կան վիթխարի միջոցները — այդ բոլորը գտնվում են բուրժուազիայի ձեռքում : Վոստիկանությունը, բանտերը, պետական ամբողջ ապարատն ընտրությունների ժամանակ մորթիզայիշի յէն յենթարկվում ոգնելու համար բուրժուազիային, ծառայելու նրա շահերին :

Բանվոր դասակարգի շահերի իսկական արտահայտիչները, — կոմունիստական առաջնորդները, — ձերբակալվում են, աքսորվում են, կոմունիստական հրատարակությունները բռնագրավվում են, ուժեղացվում են հալածանքները կոմունիստական կուսակցության դեմ :

Ժողովների ու խոսքի «աղատությունը» կարելի յեցույց տալ Պրուսիայի որինակով : Հենց միայն 1930 թվի ընթացքում այն ժամանակա ներքին գործոց մինիստր սոց-դեմոկրատ Զեվերինդի հրամանով 28,308 անդամ հատուկ վոստիկանական ջոկատներ են ուղարկվել ցույցեր ցրելու համար : 541 դեպքում վոստիկանությունը կրակ ե բացել ցուցարարների դեմ, ըստ վորում 42 հոգու գնդակահարել ե, և 51 հոգու վիրավորել ե : Վոստիկանությունն այդ տարում ցրել ե 2,494 բանվորական ժողով : Վերջերս սպանությունները, ձերբակալությունները, ծեծերն ել ավելի մեծ չափեր են ընդունել : Թերթերն ամեն որ հաղորդում են ժողովների ու ցույցերի զինված ցրումների մասին, վոր տեղի յեն ունենում ֆրանսիայում, իսպանիայում, ՀԱՄՆ-ում (Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում), Լեհաստանում, Ռումինիայում և այլն :

Հենց միայն 1931 թվին բուրժուազիան սպանել ու տանջանքների յենթարկել 369.707 պրոլետարական

հեղափոխական, իսկ վերջին վեց տարվա ընթացքում՝ մեկ միլիոնից ավելի :

Իսկ մամուլի ինչպիսի «աղատություն» կարող ե լինել կապիտալիստական յերկրում, յերբ բոլոր տպարանները, թուղթը, թերթեր տարածելու ապարատն ամբողջովին պատկանում են բուրժուազիային, վորն իր դրամով պահում ե վարձու գրչակներ, վորոնք պատրաստ են ամեն տեսակի զբարարտության, ամեն տեսակի ստորության :

Բուրժուազիան խոսում ե «խղճի աղատության» (այսինքն կրոնի) մասին, բայց բավական ե հրապարակով դուրս գալ ընդդեմ յեկեղեցու խարեյության ու սոստիապաշտության, անմիջապես դատարանն ու վոստիկանությունը կհարձակվեն նման խիղախի դեմ : Այլևս խղճի ի՞նչ աղատության մասին խոսք կարող ե լինել, յերբ «կրոնը» պարտադիր կերպով ավանդվում ե դըպրոցներում, իսկ աթերթի (անսոտվածության) քարոզն ամեն տեղ հալածվում ե :

Այսպիսի պատկեր ունի իրոք բուրժուազիայի «դեմոկրատիան» : Նա միայն քողարկում ե բուրժուազիայի դասակարգային տիրապետությունը :

ՑԱՇԻՁՄՆ ՈՒ ՍՈՅԻԱԼ-ՑԱՇԻՁՄԸ

Ներկայումս բուրժուազիան ավելի ու ավելի մեծ չափով ե գաղարում քողարկվել «դեմոկրատիայի» դիմակով : Կապիտալիզմի բոլոր հակասությունները որման հետևանքով բուրժուազիան իր տիրապետությունը պահպանելու նպատակով ավելի ու ավելի մեծ չափով ե ոգտվում բացահայտ բռնության, բացահայտիկայտական մեթոդով :

Ֆաշիստական դիկտատուրան կրօմ են իրենց վրա

իտալիայի, Լեհաստանի, Հարավ-Ալավիայի և այլ
յերկրների պրոլետարիատն ու աշխատավորները։ Այդ
յերկրներից հետո Փաշիզմի ճանապարհն են բոնել ու
րոնում են կապիտալիստական այլ յերկրներ, ինչպիսին
են՝ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան և այլն։

Արտակարգ որենքներով, տաժանքի տասնյակ տա-
րիներով Փաշիստները ձգտում են ջախջախել աճող
հեղափոխական շարժումն ու յեղբայրական կոմու-
նիտական կուսակցությունները։ Բնություններն ու
սպանություններն ուղեկցում են ֆաշիստների այն պայ-
քարին, վոր մզում են նրանք իմպերիալիզմի դիկտա-
տուրայի համար։ Ֆաշիստական բանդաները վոստի-
կանների աջակցությամբ ցրում են ժողովները, գըն-
դակոծում են ցույցերը, ջախջախում են կոմունիտա-
կան կաղմակերպությունները, սպանում են պրոլետա-
րական լավագույն հեղափոխականներին, բանտերը
լցում են բանվորներով ու դյուլացիներով։ Գերմա-
նիայում Փաշիստներն արգելեցին մինչևսկ բանվորա-
կան սպորտ-կաղմակերպություններ։ ՀԱՄՆ-ում բան-
վորների գնդակահարությունները դարձել են առորյա-
ւերկույթ։ Լեհական ռազմամոլիները «խաղաղացնում
ելին» Պետրակովի ապակեցործարանի գործադուլապոր
րանվորներին հեղձուցիչ գաղերով։ Ֆրանսիայում հենց
միայն 1931 թվին Փաշիստների ու վոստիկանության
ձեռքով սպանված ե 20 հազար բանվոր, բանտեր են
նետված 7 հազար հոգի և աքսորված ե 45 հազար հոգի։
Առ 1-ն հունվարի 1932 թվի ամենագլխավոր կապիտա-
լիստական յերկրների բանտերում պահպել ե 192.673
քաղաքանակոր (առ 1-ն հունվարի 1930 թվի նրանց
քանակը յեղել ե 62 հազար հոգի)։

Փաշիստների հետ միատեղ գործում են նաև բան-

վոր գասակարգի ամենավոխերիմ թշնամիները՝ սո-
ցիալ-Փաշիստները։ Սոցիալ-Փաշիստները, հանդիսա-
նալով բուրժուազիայի սոցիալական հենարանը, բոլոր
միջոցներով և ուժերով ողնում են բուրժուազիայի հար-
ձակմանն ընդդեմ բանվոր դասակարգի։

Գերմանիայում, որինակ, յերբ վերջերս իշխանու-
թյան գլուխ ելին անցել սոցիալ-Փաշիստները, նրանք
ելին, վոր ամենից առաջ հարձակում սկսեցին սոցիա-
լական ապահովագրության դեմ, գնդակոծեցին բանվո-
րական ցույցերը, արգելեցին Կարմիր ծակատայինների
Միությունը, հալածեցին բանվորական մամուլը, խեղ-
գեցին բանվորական գործադուլները։ Ներկայումս բո-
լոր յերկրների սոցիալ-Փաշիստներն ողնում են ձա-
պոնիայի հափշտակիչ պատերազմին Զինաստանում,
Ապարատում են Խորհրդային Միությանը, հանդես են
գտիս վորակես մեր դեմ պատրաստվող ինտերվենցիայի
ամենակատաղի կողմանակիցներ։

Սոցիալ-Փաշիստները հանդիսանում են բուրժուա-
զիայի գործակալները բանվոր դասակարգի շարքերում։
Այդ պատճառով առանց պայքար մզելու սոցիալ-Փա-
շիստների գեմ, անհնար և մորիլիզացիայի յենթարկել
բանվոր դասակարգին՝ պայքարելու բուրժուազիայի
դիկտատուրայի դեմ, Փաշիզմի դեմ։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱԼԻ ԴԻԿՏԱՏՈՐԻԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ
ՈՒՂԻՆ Ե

Բուրժուազիայի պետական իշխանության ամբողջ
ապարատը, —բանակը, վոստիկանությունը, դատա-
րանը և այլն, —ամբողջովին հարմարեցված ե աշխա-
տավորների պետությունն ամբացնելու համար, հեղա-
փոխական շարժման դեմ պայքարելու համար։

Այդ պատճառով բանվոր գասակարգի խնդիրն ե՝
փշել, ավերել բուրժուազիայի պետական մեքենան:

Վոչնչացնելով 1917 թվի հոկտեմբերին բուրժուա-
կան պետությունը հին Ռուսաստանում, ԽՍՀՄ պրո-
լետարիատը ստեղծեց իր պրոլետարական պետությու-
նը, վորագեսդի կառուցի կոմունիստական հասարակա-
կարգ, վորի որոք կմահանա պետությունը՝ մի դասա-
կարգ մի այլ գասակարգի ձեռքով ճնշելու այդ դործի-
քը:

Պրոլետարիատի դիկտատուրան»,—ասում ե ընկ.
Ստալինը, —կառավարության փոփոխություն չե, այլ
նոր պետություն ե, իշխանության նոր մարմիններով
կենտրոնում ու տեղերում, պրոլետարիատի պետու-
թյուն, վորն առաջացել ե հին պետության—բուրժուա-
զիայի պետության վլատակների վրա»:

Պրոլետարական պետությունն իր բանակով, իր
դատարանով, իր պետական ապարատով հիմնովին
տարբերվում ե բուրժուազիայի պետությունից:

Բուրժուական պետությունը փոքրամասնություն
կաղմող շահագործողների տիրապետություն ե հսկայա-
կան մեծամասնություն կաղմող աշխատավորության
վրա: Պրոլետարական պետությունը շահագործվողնե-
րի մեծամասնության տիրապետությունն ե շահագոր-
ծողների փոքրամասնության վրա:

Պրոլետարական պետությունը նպատակ ունի հաղ-
թահարել դասակարգային թշնամիների դիմադրու-
թյունը, քաղաքի ու գյուղի աշխատավոր մասսաներին
դարձնել սոցիալիզմի ակտիվ կառուցողներ, վերացնել
դասակարգերը և անցնել կոմունիզմին:

Այդ բոլորի համար պահանջվում ե յերկարատև
ժամանակ, վորագիսին կենքն անվանել ե մի ամբողջ

«պատմական շրջան»: Պրոլետարական դիկտատուրան
հենց հանդիսանում ե կամլիսալիզմից դեպի կոմունիզ-
մը յեղած անցողիկ այդ շրջանի պետության ձեւը:

Շահագործողների անխնա ճնշումը պրոլետարիա-
տի դիկտատուրայի առաջին խնդիրն ե: Պրոլետարիատի
դիկտատուրան դասակարգային պայքարի մի հատուկ
ձեւ ե, վորի որոք պրոլետարիատն իր ձեռքումն ունի
վոչնչով և վոչ վոքի կողմից չահմանափակված իշխա-
նություն:

Սակայն այդ խնդրով, ինչպես ուսուցանում եր
կենինը, չի սպառվում պրոլետարական դիկտատուրայի
եյությունը:

Նրա յերկրորդ խնդիրն ե՝ բոլոր աշխատավորնե-
րին և առաջին հերթին գյուղացիներին ցույց տված դե-
կավարությունը սոցիալիզմի համար մղած պայքա-
ռում: Այդ դեկավարության եյությունն այն ե, վոր
բանվոր դասակարգը վերջնականապես անջատում ե աշ-
խատավոր և շահագործվող մասսաներին բուրժուա-
զիայից, ներդրավում ե նրանց սոցիալիստական շինա-
րարության մեջ, սովորեցնում ե, դաստիարակում և
կարգապահ դարձնում բոլոր աշխատավորներին:

Կենինը քանից մատնանշել ե, վոր ամենակարեղորն
ե՝ «առաջավոր բանվորների հմտությունը, այն բան-
վորների, վորոնք անցել են խոշոր գործարանի յերկա-
րատև, ծանր, բայց չնորհալի դպրոցը, կարողանալ
դորձը դնել այնպես, վոր իրենց կողմը գրավեն գյու-
ղացիների մասսային, վորոնք ճնշված են յեղել կապէ-
տալիզմի կողմից, ճնշված են յեղել կալվածատերերի
կողմից, ճնշված են յեղել իրենց հին, աղքատիկ, խըդ-
ուկ տնտեսությամբ»:

Պրոլետարիատի դիկտատուրայի առաջ դրված ե

Քի յերկրորդ խնդիր ևս, —այս եւ սոցիալիստական անդասակարդ հասարակության կառուցումը:

Այդ ամենամեծ ու ամենակարևոր խնդիրն եւ: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ ենոր ձեռվ կազմակերպել յերկրի ամբողջ տնտեսությունը, ինգուստրացման յենթարկել յերկիրը, գնել գյուղացիությանը սոցիալիստական արդյունաբերության ճանապարհի վրա, բարձրացնել յերկրի տեխնիկական կորուն ու կուտտուրականությունը, վերացնել կապիտալիստական տարրերը և դասակարգերն ընդհանրապես, կառուցել սոցիալիզմ:

Այսպիսիք են պրոլետարիատի դիկտատուրայի յերեք պլանվոր խնդիրները, յերեք հիմնական կողմերը: «Միայն բոլոր այս յերեք կողմերը, միասին վերցրած, տալիս են մեզ պրոլետարիատի դիկտատուրայի լիակատար ու ավարտված հասկացողությունը» (ի. Ստալին):

Պրոլետարիատի դիկտատուրայի գոյությունը մեր յերկրում վիթխարի նշանակություն ունի համաշխարհային պրոլետարական հեղափոխության գործի համար: Նա կարևորագույն պայման է՝ տապալելու համար շահագործողների իշխանությունը կապիտալիստական բոլոր յերկրներում և պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար ամբողջ աշխարհում: ԽՍՀՄ պրոլետարիատը, իր ձեռքն առնելով իշխանությունը, տարեկ ե ու տանում ե վճռական հաղթանակներ սոցիալիստական շինարարության բոլոր ճականներում, իր փորձառությամբ, իր օրինակով սովորեցնում ե բոլոր յերկրների պրոլետարիատին և աշխատավորներին, թե ինչպես պետք ե մարտնչել շահագործողների իշխանության տապալման համար: Ամբողջ աշխարհի պրոլետարիատն ու աշխատավորները հանձնին Խորհրդային Մի-

ության ունեն հուսալի հենարան այն պայքարում, վճռ մղում են բուրժուազիայի դեմ: Հատկապես հենց այդ պատճառով Խորհրդային Միությունը հանդիսանում է համաշխարհային պլորետարիատի հայրենիքը և գաղութների ու կախյալ յերկրների աշխատավորների հենարանը՝ իմպերիալիզմի ճնշման դեմ մղած իրենց պայքարում:

ՆՅՈՒԹԵՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԱՄԱՐ

1. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ-ՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆ Ե

Դրի առ պետության մասին լենինի դասականությունից ներքում տպած հատվածի հիմնական մտքերը:

Յուրաքանչյուր պետություն, վորտեղ կա հողի և արտադրության միջոցների մասնակոր սեփականություն, վորտեղ իշխում ե կապիտալը, վորչափ ել նա դեմոկրատական լինի, նա կապիտալիստական պետություն է, նա մի մեքենա յե կապիտալիստների ձեռքում՝ յենթարկման մեջ պահելու համար բանվոր դասակարգին և ամենաչքավոր գյուղացիությանը: Կապիտալը, քանի նա գոյություն ունի, իշխում է ամբողջ հասարակության վրա, և վոչ մի դեմոկրատական հանրապետություն, վոչ մի ընտրական իրավունք չի փոխում գործի եյությունը... Բայց քանի դեռ կա մասնավոր սեփականություն, թեկուզ պետությունը դեմոկրատիկ հանրապետություն լինի, նա վոչ այլ ինչ ե, քան մի մեքենա կապիտալիստների ձեռքում՝ ճնշելու համար բանվորներին, և վորչափ աղաւատ և պետությունը, այն-

չափ այդ ավելի պարզ և արտահայտվում։ Դրա որիւնակն ե Շվեյցարիան՝ Յելլոպայում, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն՝ Ամերիկայում։

Վոչ մի տեղ կապիտալն այնչափ անխնա չի հշում, վորչափ հատկապես հենց այդ յերկրներում, և վոչ մի տեղ չի յերեւմ այդ այնպիսի պարզությամբ, թեկուղ այդ դեմոկրատիկ հանրապետություններ են, —և վորչափ ել նրանք չեն գունաղարդված լինեն, —վոչ մի տեղ՝ չնայած աշխատանքային դեմոկրատիայի, բոլոր քաղաքացիների իրավահավասարության մասին յեղած բոլոր խոսքերին։ Իրոք Շվեյցարիայում և Ամերիկայում իշխում է կապիտալը, և բանվորների՝ իրենց գրության բարելավման մասին բոլոր փոքրիչատե չուրջ փորձերն անմիջապես հանդիպում են քաղաքացիական պատերազմի... Կապիտալի ուժն ամեն ինչ ե, իսկ պարզաբնաւոր, ընտրությունները պաճուճապատանքներ են (մարդունետկա), տիկնիկներ են...»

Ինչ ձեռով ել քողարկվելս լինի, —թող այդ լինի ամենաղեմոկրատիկ հանրապետությունը, բայց յեթե նա բուրժուական ե, յեթե նրա մեջ մնացել ե հողի, գործարանների ու Փարբիկների նկատմամբ մասնավոր սեփականությունը, և մասնավոր կապիտալը վարձու ստրկության մեջ ե պահում ամբողջ հասարակությունը, այսինքն՝ յեթե նրա մեջ չի իրականացվում այն, ինչ հայտարարում են մեր կուսակցության ծրագիրն ու խորհրդային սահմանադրությունը, —այդ պետությունը մի մեքենա յե՝ մեկի ձեռքով մյուսին ճնշելու համար։

Յեկ այդ մեքենան մենք կվերցնենք այն դասակարգի ձեռքը, վորը պետք ե տապալի կապիտալի իշխանությունը։ Մենք գեն կնետենք բոլոր հին նախապաշա-

րումներն այն մասին, թե պետությունն ընդհանուր հավասարություն ե, —այդ խարեցություն ե. քանի կաշահագործում, չի կարող հավասարություն լինել։ Կալվածատերը չի կարող հավասար լինել բանվորին, սովորաբեր կուշտին։ Այնպիսի մեքենան, վորը կոչվում եր պետություն, վորի առաջ մարդիկ կանգ են առնում սնոտիապաշտ պատկառանքով և հավատում են հին հեքայթներին, թե այդ համաժողովրդական իշխանություն ե, —պրոլետարիատն այդ մեքենան գեն ե չպըտում և ասում՝ այդ բուրժուական խարեցություն ե։ Մենք այդ մեքենան խլեցինք կապիտալիստներից, մենք վեցցրինք այն մեկ։ Այդ մեքենայով կամ մահակով կջախջախենք մենք յուրաքանչյուր շահագործում, և այն ժամանակ աշխարհում չի մնա շահագործման հնարավորություն, չեն մնա հողատերեր, գործարանատերեր, չի լինի այնպես, վոր մեկը չափից ավելի հագենա, իսկ մյուսները մնան սոված, —միայն այն ժամանակ յերբ դրա հնարավորությունները չեն մնա, այն ժամանակ մենք այդ մեքենան կհանձնենք ջարդելու։ Այն ժամանակ չի լինի պետություն, չի լինի շահագործում։ Ահա մեր կոմունիստական կուսակցության տեսակետը։ (Լենին)։

2. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ»— ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ Ե ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարդաներինում քերած հատվածը և ԱԱԱ.՝ ինչո՞ւ յեր լենինը բորժուական «ազատությունը» հարուստների համար ազատություն անվանում։ «Բանվորները շատ լավ գիտեն, վոր «ժողովների ազատությունը դատարկ հնչուն ե մինչև իսկ ամենա-

դեմոկրատիկ բուրժուական հանրապետություններում, քանի վոր հարուստների տրամադրության տակ գտնը-վում են լավագույն հասարակական ու մասնավոր շենքերը, կա նաև բավականաչափ ազատ ժամանակ, և նրանք վայելում են իշխանության բուրժուական ապա-րատի հովանավորությունը։ Քաղաքի ու գյուղի պրոլե-տարները չունեն վոչ առաջինը, վոչ մյուսը և վոչ ել յերրորդը։

Քանի գործն այդ ձեռվ ե դրված՝ «Հավասարու-թյունը», այսինքն՝ «անխարդախ դեմոկրատիան» խա-բեյություն ե։ Իսկական հավասարություն նվաճելու համար, աշխատավորներին հնարավորություն տալու համար՝ իրադորձելու իսկական դեմոկրատիա, անհրա-ժեշտ ե նախ և առաջ խել շահագործողներից բոլոր հասարակական ու մասնավոր պալատները, տալ աշխա-տողին ազատ ժամանակ, և անհրաժեշտ ե, վոր նրանց ժողովների ազատությունը պաշտպանեն զինված բան-վորները և վոչ թե սարսափի տակ պահպող զինվորների ողնությամբ աղնվականների տղաները կամ կապիտա-լիստական շրջաններից յելած սպաները։

Միայն այսպիսի փոփոխությունից հետո կարելի յե խոսել ժողովների ազատության ու հավասարու-թյան մասին, առանց ծաղրի յենթարկելու բանվորնե-րին, աշխատավոր ժողովրդին ու չքալորությանը։ Սակայն նման փոփոխությունն իրադորձել կարող ե միայն աշխատավոր ժողովրդի ավանդարդը, —պրոլե-տարիատը, վորը կտապալի շահագործողներին, բուր-ժուազիային։

«Մամուլի աւատությունը» նույնպես «անխարդախ դեմոկրատիայի» գլխավոր լողունգներից մեկն ե ծառա-յում։ Բայց ի այնպես բանվորները դիտեն, վոր այդ

ազատությունը խարեյություն է, քանի դեռ լավագույն տպարանները և թղթի ամենամեծ պաշարները կդտնվեն կապիտալիստների ձեռքում, իսկ կապիտալի իշխանու-թյունը կշարունակի իշխել մամուլի վրա... Բանվորա-կան մասսաների, բանվորների ու գյուղացիների համար իսկական հավասարություն նվաճելու համար անհրա-ժեշտ ե տապալել կապիտալի լուծը, ջախջախել ճնշող-ներին և կոտրել նրանց գիմադրությունը։ Կապիտա-լիստները միշտ ել «ազատություն» են անվանել հա-րուստների համար շահույթի ազատությունը և աղքատ-ների համար սովոր մեռնելու ազատությունը։

Կապիտալիստները մամուլի ազատություն տալ հասկանում են մամուլը հարուստների կողմից կաշ-սելու ազատությունը, այսպես կոչվող հասարակական կարծիքը խորտակելու և կեղծելու համար հարստու-թյան ողտազծորման ազատությունը։ Իսկական ազա-տություն ու հավասարություն կտա այն հասարակա-կարգը, վոր սահմանում են կոմունիստները, վորի որք չի կարելի հարստանալ ուրիշի հաշվին, որյեկտիվ հնարավորություն չի լինի ուղղակի կամ կողմնակի կերպով մամուլը յենթարկել փողի հզորության, ար-դեւք չի լինի բանվորների համար իրադորձել հասար-կությանը պատկանող տպարաններն ու թուղթն ող-տագործելու իրավունքը...»

... Յեվրոպայի կապիտալիստորեն ամենազարդա-ցած յերկրում, այն ե՝ Գերմանիայում, հանրապետա-կան լիակատար ազատության ամիսները, վորը բերավ իմպերիալիստական գերմանիայի դեմ տարած հաղթա-նակը, ցույց տվեցին գերմանական բանվորներին և ամ-բողջ աշխարհին, թե ինչումն ե ջուրժուական-դեմո-կրատական հանրապետության իսկական դասակար-

գային եյությունը։ Կարև ի իբկնեխտի և մողա լյուքս սեմբուրդի սպանությունը համաշխարհային պատմական նշանակություն ունեցող անցք և հանդիսանում վոչ միայն այն պահանով, վոր ստրատեգիապես ընկան լավագույն մարտիկ և իսկական պրոլետարական կոմունիստական ինտերնացիոնալի առաջնորդները, այլ և այն պատճառով, վոր դրանով վերջնականապես արտահայտվեց կապիտալիստական պետության դասակարգային եյությունը։ Գերմանական հանրապետության մեջ գոյություն ունի պրոլետարիատի ձերբակալված առաջնորդներին անպատճե սպանելու «զառությունը»։ Այլ կերպ չի յել կարող լինել, քանի դեռ հաղթանակում ե կապիտալիզմը» (Լենին)։

3. ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԵՐԿՈՒՄ ՄԵԹՈԴ

Մշակիր ընկ. Մոլոտովի գեկուցումից քերված հատվածը և պատրաստվիր ամփոփ յելույթի հետևյալ քերմայով—

Ինչպիսի՞ միջոցներով և բուրժուազիան ապահովում իր տիրապետությունը։

«Հակասությունների սրումը կապիտալիստական յերկրների ներառմ անխուսափելիորեն բղխում և կապիտալիզմի ընդհանուր, ճշնաժամի աճումից։ Այժմյան տնտեսական ճգնաժամը հատուկ ուժով սրում և հակասությունները բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև։ Այդ բոլորն իր կնիքն ե դնում բուրժուական պետական իշխանության բնույթի վրա՝ կապիտալիզմի ընդհանուր աճով ճգնաժամի շրջանում։

Բուրժուական իշխանության դասակարգային բնույ-

թը հանդեմ ե գալիք այժմ ավելի ու ավելի մերկացված ձևով։ Այժմյան մինիստրները, հեռանալով իրենց պոստերից, դառնում են կապիտալիստական մոնոպոլիստների ղեկավարներ և ընդհակառակը, կապիտալիստական մոնոպոլիստների առաջնորդները ավելի ու ավելի հաճախ մինիստրներ ու կառավարության ղեկավարներ են դառնում։ Դրա համար բավականաչափ որինակներ կան յուրաքանչյուր իմպերիալիստական յերկրում։ Բուրժուական կառավարությունների այնպիսի գործիչներ ՀԱՄՆ-ում, ինչպիսին ե պրեզիդենտ Հուլիուս, Փինանսների մինիստր Մելլոնը, նախկին արտաքին գործոց մինիստր Յուլը, ուղմական մինիստր Լամոնտը և այլն, կամ դեռ յերեկ գլխավորում ելին կապիտալիստական խոշորագույն մոնոպոլիաներ ու բանկեր, կամ փոխելով կառավարական պոստերը մասնավոր գործունեյության, այժմ գլխավորում են Փինանսական կապիտալի հուժկու կազմակերպություններ։ Նույնպիսի դրություն ե տիրում Անդլիայում։ Կոնսերվատիվ կառավարության յերեկվա ղեկավարները՝ Բոլդուինը, Ֆիրկենհեդը, Զեմբերելենը և այն այսոր գլխավորում են խոշորագույն մետաղածուլական, քիմիական և այլ կապիտալիստական միավորություններ։ Գերմանիայում, Ֆրանսիայում և այլ կապիտալիստական յերկրներում մենք հանդիպում ենք նույն պատկերին։

Մյուս կողմից բուրժուազիան ոգտվում ե իր իշխանության համար, հրավիրելով իշխանության գլուխ սոցիստ-դեմոկրատիայի առաջնորդներին, աշխատելով այդպիսով քողարկել իր իշխանության իսկական դասակարգային բնույթը։ Այդ մեթոդին բուրժուազիան դիմում և առանձնապես այն յերկրներում, վորտեղ բանվոր դասակարգը կազմում ե բնակչության մեծամաս-

նությունը, որինակ՝ Անդլիայում ու Գերմանիայում:

Իր իշխանությունը պահպանելու համար բուրժուազիան ոգտվել է ու ողովում և յերկու հիմնական մեթոդով: Կհիշեցնեմ, թե ինչ եր ասում լենինը բուրժուազիայի իշխանության այդ յերկու մեթոդի մասին.

«Յեթե բուրժուազիայի տակտիկան շարունակ միաձև կամ միանման լիներ, բանվոր դաստիարակն արագ կվարժվեր պատասխանել դրան նույնչափ միաձև կամ միանման տակտիկայով: Իրոք բուրժուազիան բոլոր յերկրներում անխուսափելիորեն մշակում է կառավարման յերկու սխստեմ. իր շահերի համար և իր իշխանությունը պահպանելու համար մղած պայքարի յերկու մեթոդն ել մերթ փոխարինում են միմյանց, մերթ ներհյուսվում իրար տարբեր համակցություններով: Այդ նախ՝ բոնության մեթոդն ե, բանվորական շարժմանը որևէ զիջում անելուց հրաժարվելու մեթոդն ե, բոլոր հին ու անցած հիմնարկների պաշտպանության մեթոդն ե, ուժքորմների անհաշտ ժխտման մեթոդն ե: Այդպիսին ե կոնսերվատիվ քաղաքականության եյությունը, վորն ավելի ու ավելի մեծ չափով և գագարում Արեմայան Յելրոպայում հողատիրական դաստիարակերի քաղաքականություն լինելուց, ավելի ու ավելի մեծ չափով դառնում և ընդհանուր բուրժուական քաղաքականության այլաձևություններից մեկը: Յերկրորդ մեթոդն ե—«լիբերալիզմ» մեթոդը, քայլեր անելու մեթոդը գեպի քաղաքական ուժքորմների կողմը, զիջումների կողմը և այլն:

Բուրժուազիան մի մեթոդից անցնում է մյուսին վոչ թե առանձին անձանց չարամիտ հաշիվներով և վոչ թե պատահական կերպով, այլ իր սեփական դրության

հիմնական հակասությունների շնորհիվ» (Յերկ Ժող. Հատ. XI, էջ 136):

Այդ ասել եր լենինը դեռ 1910 թվին, սակայն Լենինի այստեղ բերած դիտողությունները վերաբերում են և այժմ յան մոռենտին: Կապիտալիստական յերկրներում պարագան մեծ չափով փոխվել է նախընթաց յերկու տասնամյակում: Բայց չնայած դրան, բուրժուազիայի իշխանության յերկու հիմնական մեթոդներն այժմ ել զործում են: Բուրժուազիան ոգտվել է և ողովում ե մի կողմից բոնության մեթոդից, և մյուս կողմից՝ «լիբերալիզմի» մեթոդից: Այժմ բոնության մեթոդը դարձել է ֆաշիզմի մեթոդ, իսկ «լիբերալիզմի» մեթոդը դարձել ե սոցիալ-դեմոկրատիայի հետ կոալիցիայի մեթոդ: Զի կարելի մոռանալ բուրժուազիան տիրապետության այդ յերկու մեթոդների մասին: Զի կարելի դրա հետ միասին չնկատել այն, վոր բուրժուազիայի տիրապետությունը հակումն ունի ել ավելի մեծ չափով գործադրելու բոնության մեթոդը, վորն իր արտահայտությունն ե գտնում Փաշիզմի աճման, բուրժուազիան պետության ուժեղ Փաշիզացման մեջ: Մյուս կողմից բուրժուազիան չի կարող այժմ ևս հրաժարվել «լիբերալիզմի» մեթոդից, սոցիալ-դեմոկրատիայի հետ կոալիցիայի մեթոդից: Սակայն ինքը սոցիալ-դեմոկրատիան ևս ավելի ու ավելի արագ ընթանում ե դեպի Փաշիզացման ճանապարհը, սոցիալ-դեմոկրատական ու ուժքորմիստական արհմիտութենական ապարատը Փաշիստացող բուրժուազիան պետության հետ ներածման ճանապարհը» (Վ. Մ. Մոլոտով):

4. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ՔԻԿԱՏԱՏՈՒՐԱՆ

Գրի առ ընկ. Ստալինի ներքեւում բերված խոսքերը պրոլետարական դիկտատուրայի յերեք հիմնական կողմերի մասին։

Մշակիր յերկու հատվածն ել, պատրաստվիր ամփոփ յելույթ ունենալու քաղաքարապմունքներում հետեւյալ հարցի առթիվ։—

Ինչեւ պրոլետարիատի դիկտատուրան։

Պրոլետարական դիկտատուրայի յերեք հիմնական կողմերը։

1. Պրոլետարիատի կողմից իշխանության ոգտառքործումը շահագործողներին ճնշելու համար, յերկրի պաշտպանության համար, այլ յերկրների պրոլետարների հետ կապերի ամրացման, բոլոր յերկրներում հեղափոխության զարգացման ու հաղթանակի համար։

2. Պրոլետարիատի կողմից իշխանության ոգտառքործումը աշխատավորներին և շահագործվող մասսաներին բուրժուազիայից վերջնականապես կտրելու, պրոլետարիատի դաշնիքն այդ մասսաներին սոցիալիստական շինարարության գործի մեջ քաշելու, այդ մասսաներին պրոլետարիատի կողմից պետական դեկավարություն ցույց տալու համար։

3. Պրոլետարիատի կողմից իշխանության ոգտառքործումը սոցիալիզմի կաղմակերպման, դասակարգերի վոչչացման, առանց դասակարգերի հասարակության, առանց պետության հասարակության անցնելու համար։ (Ստալին)։

Պրոլետարիատի դիկտատուրան կառավարության փոփոխությունն չե, այլ նոր պետություն ե, իշխանու-

թյան նոր մարմիններով՝ կենտրոնում ու տեղերում, պրոլետարիատի պետություն ե, վոր առաջացել է հին պետության, բուրժուազիայի պետության վիճակների վրա։

Պրոլետարիատի դիկտատուրան առաջ ե գալիս վոչթեքուական կարգերի հիման վրա, այլ նրանց ջարդելու ընթացքում, բուրժուազիայի տապալումից հետո, կալվածատերերի ու կապիտալիստների եքսպրոպրիացիայի ընթացքում, արտադրության հիմնական դործիքների ու միջոցների սոցիալիզացիայի ընթացքում, պրոլետարիատի բանի հեղափոխության ընթացքում։

Պրոլետարիատի դիկտատուրան հեղափոխական իշխանություն ե, վոր հենվում ե բուրժուազիայի դեմքործած բռնության վրա։

Պետությունը մի մեքենա յե իշխող, դասակարգեած ենոքում՝ ճնշելու համար իր դասակարգային հակառակորդների դիմադրությունը։

Այդ տեսակետից պրոլետարիատի դիկտատուրան հանդիսանում ե մի մեքենա՝ բուրժուազիային ճնշելու համար։

Սակայն այստեղ կա մի եյական տարբերություն։ Այդ տարբերությունն այն ե, վոր մինչեւ այժմ գոյություն ունեցող դասակարգային պետությունները հանդիսացել են շահագործող փոքրամասնության դիկտատուրա շահագործվող մեծամասնության նկատմամբ, մինչդեռ պրոլետարիատի դիկտատուրան շահագործվող մեծամասնության դիկտատուրան ե շահագործող փոքրամասնության նկատմամբ։

Կարճ ասած՝ «Պրոլետարիատի դիկտատուրան ուրենքով չսահմանափակված» ե բռնության վրա հենվող՝

պրոլետարիատի տիրապետությունն ե բուրժուազիայի վրա, պրոլետարիատի, վորը վայելում ե աշխատավորուների ու շահագործվող մասսաների համակրությունն ու աջակցությունը» (Լենին, Ստալին) :

ԿՈՆՏՐՈԼ ՀԱՐՑԵՐ

1. Վորապեսի՞ք են բուրժուական պետության խընդիրներն ու քաղաքականությունը:
2. Վորո՞նք են պրոլետարական պետության հիմնական խնդիրները:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿԱՍՈՒՐԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Ե

ՊՐՈԼԵՏԱՐԻԱԾԻ ԴԻԿԱՍՈՒՐԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐ Ե

Դասակարգային պայքարը չի դադարում պրոլետարիատի գիշտատուրայի շրջանում, կապիտալիստական հասարակությունից դեպի կոմունիստական, անդասակարգ հասարակության անցնելու շրջանում։

«Դասակարգերի վոչնչացումն,— ասում ե Լենինը, — յերկարատև, դժվարին, համառ պայքարի գործ ե, վորը կապիտալի իշխանության տապալումից հետո, բուրժուական պետության ավերումից հետո, պրոլետարիատի գիշտատուրա հաստատելուց հետո չի վերանում...այլ միայն փոխում ե իր ձևերը, դառնալով շատ տեսակետից ե'լ ավելի դաժան։»

Դասակարգային թշնամին ոգտագործում ե պայքարի իրեն մատչելի բոլոր միջոցներն ու ձևերն ընդդեմ հաղթանակած բանվորների ու դյուղացիների։ Նա չի խորշում վոչ մի զենքից, վորապեսի վերագարձնի իր

կորցրած իշխանությունը։ Հույս չունենալով իր սեփական «ներքին» ուժերի վրա, նա դիմում ե ոտարերկրյա բուրժուազիայի զինված ոգնությանը, հույսը դնում ե ինտերվենցիայի վրա։

Այդպես եր յերկրում 1918—1920 թվ. շրջանում, յերբ զանազան կողմերից, զանազան ճակատներում ոռուական բուրժուազիան ու կալվածատերերը միջազդային իմպերիալիզմի անմիջական ոգնությամբ ձգտում եյին զինված ձեռքով տապալելու պրոլետարիատի դիկատատուրան, վերագարձնելու իրենց իշխանությունը, վերագարձնելու իրենց դործարանները, Փարբիկներն ու հողերը, վերականգնելու կապիտալիզմը։

Զինված պայքարում ջախջախված կապիտալիստները, կալվածատերերը, կուլակները չեն դադարեցնում և որչեղային իշխանությունը վոչնչացնելու, սոցիալիզմի շինարարությունը ձախողելու իրենց փորձերը։

«Պրոմկուսակցության» ու մենշևիկների գատավարությունները ցույց տվեցին ամբողջ աշխարհի աշխատավորներին, վոր դասակարգային թշնամին վայր չի դրել իր զենքը։

Ոտարերկրյա մի քանի կառավարությունների ոգնությամբ յերկաթուղիների ու դործարանների նախկին սեփականատերերը, նախկին կալվածատերերն ու ցարական ժամանակվա մի քանի մասնագետներ՝ մենշևիկների ակտիվ աջակցությամբ ու մասնակցությամբ, կաղմակերպեցին վնասարարական աշխատանք, վորի նպատակն ե յեղել սոցիալիստական շնարարության ձախողումը։ Նրանք աշխատում եյին մեն կերպ քայլայել մեր յերկրի տնտեսական կյանքը և

այդպիսով արագացնել ու հեշտացնել ինտերվենցիան :

Դետքաղվարչությունը հայտաբերեց բոլոր զլիսա-
վորագույն վնասարարական կազմակերպությունները :
Սորտակվեցին մեր տնտեսական կորովը խախտելու վե-
րաբերյալ դասակարգային թշնամու հույսերը :

Վնասարարներն ու ինտերվենտներն իրենց հույսը
դրել են կուլակության վրա, վորը պայքարել ե ու
սկսէքարում ե պրոլետարական դիկտատուրայի դեմ :
Համատարած կոլեկտիվացման հիման վրա վորպես դա-
սակարդ վերացվող կուլակությունը կատաղորեն, գա-
ղանաբար, պայքարում ե Խորհ . իշխանության դեմ :
Նա կազմակերպում ե տերրորիստական հարձակում-
ներ : Նա նենդամիտ, զրաքարտական ադիտացիա յե
մզում Խորհրդային իշխանության դեմ, կոլտնտեսու-
թյունների դեմ :

Քաղաքացիական պատերազմի տարիներին կուլակ-
ները կազմակերպեցին մի շարք ապստամբություններ
Կարմիր բանակի թիկունքում, վորպեսզի ոզնեն սպի-
տակ-դվարդիականներին : Հենվելով գյուղացիական
չքավորության կոմիտեների վրա, պրոլետարիատը
վարեց ապակուլակացման քաղաքականություն : Խոր-
հուրդների ամրացումը և կուսակցության ճիշտ քաղա-
քականությունն այդ շրջանում կտրեցին միջակին կու-
լակությունից և հնարավորություն տվեցին վերացնե-
լու՝ իր իշխանությունը վերականգնելու վերաբերյալ
դասակարգային թշնամու բոլոր փորձերը :

Վերջացավ քաղաքացիական պատերազմը : Խոր-
հուրդների յերկիրը ջախջախեց ինտերվենտներին ու
սպիտակ-դվարդիականներին : Բանվոր դասակարգն
ընդհուպ մատեցավ տնտեսական շինարարության, պա-

տերազմի միջոցով ավերիլած տնտեսության վերականգ-
նման, սոցիալիզմի կառուցման խնդրին :

Մացրվեց նոր տնտեսական քաղաքականություն
(ՆԵՊ), այդ դեպի սոցիալիզմ տանող միակ հնարավոր
ուղին : Կուլակը ձգուում եր ոգտագործել Խորհրդային
իշխանության թույլատրած աղատ առևտուրը և աշ-
խատում եր վերականգներին իր նախկին իշխանությունը
գյուղում, տանել բաժան-բաժան գյուղացիությունն իր
յետեկց, կապիտալիստական ուղիով, անջատել նրան
պրոլետարիատից :

Սակայն Նեպը հենց առաջին քայլերից պրոլետա-
րիատը հարձակում սկսեց իր գաղաքարգային թշնա-
միների դեմ : Գյուղի աշխատավոր խավերին ողնու-
թյուն ցույց տալու քաղաքականությամբ, հարկային
քաղաքականությամբ, կուլակներին ընտրական իրա-
վունքներից զրկելու և մի շարք այլ միջոցներով պրոլե-
տարական դիկտատուրայի պետությունը սահմանափա-
կում եր և վանում եր կուլակներին և քաղաքի կապի-
տալիստական տարրերին : Սկսվեց յերկու սիստեմի,
տնտեսություն վարելու յերկու ձևի, —կապիտալիստա-
կան ու սոցիալիստական ձևի, —մեծ պայքարը :

Յեկայդ պայքարում պրոլետարիատը տարավ վըճ-
ռական հաղթանակ : Արագ վերականգնվեց ժողովրդա-
կան տնտեսությունը, բանվոր դասակարգն անցավ ժո-
ղովրդական տնտեսության լիակատար վերակերտմանը՝
սոցիալիստական հիմունքներով վերակառուցել տնտե-
սությունը : Խորտակվեցին քաղաքի կապիտալիստական
տարրերը : «Ով-ո՞ւմ» հարցը քաղաքում լուծվեց հո-
գուտ սոցիալիզմի :

Միաժամանակ 1929 թիվն իր հետ բերավ հիմնական
բեկում նաև գյուղում : Գյուղացիական հիմնական մաս-

սաները վճռականապես թևակոխեցին կոլեկտիվացման ուղին :

Բուռն աճող սոցիալիստական արդյունաբերության հիման վրա, համատարած կոլեկտիվացման հիման վրա բանվոր դասակարգը Համկոմիուսի (թ) ղեկավարությամբ անցավ ամբողջ ճակատով վճռական հարձակման, սկսեց արմատախիլ անել կապիտալիզմի վերջին մնացորդները, կուլակության սահմանափակման ու վտարման քաղաքականությունից անցավ կուլակության վորպես դասակարգի վերացմանը :

Մենք թևակոխեցինք սոցիալիզմի շրջանը, ավարտեցինք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը : ԽՍՀՄ վերջնականապես հաստատվեց սոցիալիստական ճանապարհին :

Ամբողջ ժողովրդական տնտեսության 90,7 % 1932 թվին տվել են մեր տնտեսության սոցիալիստական սեկտորը : Մեր ցանքադաշտի 77,3 տոկոսը ցանում են կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները : Կոլտնտեսականը դարձավ հողագործության մեջ կենտրոնական դեմք : Զքավորմիջակ տնտեսությունների 72 %-ը համախմբված են կոլտնտեսություններում : Կարեռագայն հացահատիկային ռայդներում համատարած կոլեկտիվացումը և նրա հիման վրա կուլակության վորպես դասակարգի վերացումը հիմնականում ավարտված են :

Բայց կուլակը ջախջախված են, սակայն վերջնականապես վոչնչացված չեն : Կուլակությունը վորչափ ավելի մոտ են զգում իր անխուսափելի վախճանը, այնքան ավելի հուսահատորեն են նա դիմադրում սոցիալիզմի հաղթական հարձակմանը :

Կուլակն աշխատում է սռղոսկել կոլտնտեսություն-

ները և բոլոր միջոցներով քայլայել այն ներսից : Կուլակները համարակում են կոլտնտեսական գույքը և դրույմ են այլ բանն անելու անդիտակից կոլտնտեսականներին : Կուլակությունն ոգտագործում ե կոլտնտեսական ղեկավարության ամենափոքր սխալն անդամ, վորպեսդի պառակտում մտցնի կոլտնտեսականների մեջ, անջատի նրանց բանմուր դասակարգից : Նա պաշտպանում է հայլասարեցումն ու դիմադրկությունը, աշխատում ե ոգտագործել իր նպատակների համար ներկայումս ծավալվող կոլտնտեսական աւելտուրը, ագիտացիա յի մղում այն պարտավորությունների կատարման դեմ, վոր հանձն են առել կոլտնտեսականներն ու մենատնտեսները պլրուետարական պետության հանդեպ, աշխատում է ձախողել հացամթերումները և այլն : Դասակարգային թշնամին ձգտում ե քայլայել կոլտնտեսությունների տնտեսությունը, խախտել աշխատանքային կարգապահությունը, գողանալ և ցաքոցրիվ անել համարակական սեփականությունը, կազմակերպել հացամթերումների, ցանքի հակահեղափոխական սաբուտաժ :

Զկա այնպիսի ճեղք, վորից չփորձի սողոսկել դասակարգային թշնամին : Աչա թե ինչու այժ.ք.՝ կապիտալիստական տարրերի վերջին կապիտալիստական դասակարգի, — կուլակության, — վերացման շրջանում, անհրաժեշտ ե դասակարգային հասուկ աչալըրշություն :

Դասակարգային թշնամին ջախջախված ե, բայց ատկամին վոչնչացված չեն : Այդ անհրաժեշտ ե հիմք շարունակ և մորիլիզացիայի յենթագոկներ մեր բոլոր

ուժերը՝ վերջնականապես վոչնչացնելու հօնմար դասակարդերը և հենց այն պատճառները, վոր առաջացնում են դասակարգային տարբերություններ։

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՇԻՆՔԸ ԳՅՈՒՂԱՑԻԹՅԱՆ ՀԵՏ

Մեր հուսակցությունը հենց իր գոյության սկզբից սովորեցրել են, վոր բանվոր դասակարգն իր հեղափոխական պայքարում մենակ չեն։ Վլադիմիր Իլյիչը, — բայլշեմիկների առաջնորդը և ուսուցիչը, — միշտ մասնանշել ե գյուղացիության բազմամիլիոն մասսանորին, վորպես բանվոր դասակարգի դաշնակց։

Բայլշեմիկները, Լենինի գլխավորությամբ, ամենակատաղի պայքար են մղել մենշեմիկների, տրոցիկստների և բոլոր նրանց գեմ, ովքեր հանձին գյուղացիության տեսնում ենին վոչ թե բանվոր դասակարգի դաշնակցի, այլ նրա թշնամու։ Գյուղացիությունը, — առում են բայլշեմիկները, — տարբերում ե բանվոր դասակարգից շատ բանում։ Գյուղացին, թեկուզ և ինքն աշխատավոր ե, բայց մանր-սեփականատեր ե, քանի վոր նրան պատկանում իր հողն ու աշխատանքի գործիքները։ Հատկապես հենց այդ ե, վոր տարբերում ե գյուղացիներին պրոլետարներից, վորոնք վոչինչ չունեն՝ բացի իրենց բանվորական ուժից։

— Բայց միանույն ժամանակ գյուղացիությունը հանդիսանում է հասարակության շահագործվող շերտ։ Հողագրկությունը, սակավահողությունը, կալվածատեր-ճորժատերի ստրկությունը, քաղաքական ճնշումը, դաժան շահագործումը, — այս բոլորից չափանց տանջվում ե աշխատավոր գյուղացին։ Յեվ այդ պատճուղ աշխատավոր գյուղացիությունը, ինչպես և

բանվոր դասակարգը, շահագործված ե շահագործողների տապալման ու նոր սոցիալիստական հասարակակարգ հաստատելու մեջ։

Բանվոր դասակարգի և գյուղացիության ճանապարհները միանում են ։ թե՛ մեկը և թե՛ մյուսը կարող են իրենց գրությունը բարելավել միայն ամենանշակատ պայքար մղելով իրենց ճնշողների դեմ, կարող են բարելավել իրենց գրությունը միայն հեղափոխության միջոցով։ Յեվ բանվոր դասակարգը պետք ե առաջնորդի գյուղացիությանը շահագործողների դեմ մղվող մարտին։

Սակայն բայլշեմիկները միշտ ել գյուղացիության մեջ միատարր մասսա չեն տեսնել։ Գյուղացիները տարբեր են լինում, — ասում եյին բայլշեմիկները։

Այլ բան ե բատրակը, վորը չունի մի կտոր հող ու աշխատանքի վորեե սեփական գործիք։ Նա գյուղատեսական վրոլետար ե, քանի վոր նրա գյուղացիության միակ աղբյուրը հանդիսանում է իր բանվորական ուժի վաճառքը։ Նրա կողքին կանգնած է սակավահող գյուղացին — չքավորը, վորը կիսով չափ բատրակ ե, քանի վոր սեփական տնտեսությունը նրան հնարավորությունը չի տալիս կերպելու իրեն և իր ընտանիքին։

Այլ բան ե միջակը, վորի հողն ել ավելի շատ ե, աշխատանքի գործիքներն ել։ Նա յերբեմն դիմում ե նաև բանվորական վարձու ուժի, թեև նրա տնտեսությունն ել աշխատանքային տնտեսություն ե։ Իհարկե, նա նույնպես դաժանորեն տասապում ե շահագործումից, թեկուզ և վոչ այն չափով, ինչ չափով բատրակն ու չքավորը։

Բոլորովին այլ բան ե կուլակը։ Նա նույնպես գյուղացի յե, բայց շահագործող գյուղացի յե, գյուղա-

կան կապիտալիստ ե : Նրա հողը շատ ե , անասունները
շատ են , գյուղատնտեսական ինվենտարը շատ ե : Նա
շարունակ ուղարկում ե բատրակների ու չքավորների աշ-
խատանքից , իսկ յերեմն նաև՝ միջակների աշխատան-
քից : Նա հաճախ վաշխառու յե , մանր-առևտրական :
Պարզ ե , վոր նրան չի կարելի խառնել վո՛չ բատրակի ,
վո՛չ չքավորի հետ , վորոնց նա շահագործում ե և վո՛չ
ել միջակի հետ , վորի տնտեսությունն , ինչպես առա-
ցինք , աշխատանքային տնտեսությունն ե : Մի խոսքով՝
կուլակը բոլորովին այլ գյուղացի յե , քան բատրակը ,
չքավորն ու միջակը :

Գյուղացիության մեջ յեղած այդ տարբերություն-
ները հաշվի յե առել մեր կուսակցությունը , վարելով
բանվոր դասակարգի՝ գյուղացիության հետ դաշինքի
քաղաքականությունը :

Հեղափոխական շարժման տարբեր աստիճանների
վրա չի կարող միատեսակ լինել բանվոր դասակարգի՝
վերաբերմունքը դեպի գյուղացիությունը :

Ցարի դեմ , կալվածատիրական հասարակակարգի
կեմ բանվոր դասակարգը դնում եր ամբողջ գյուղա-
ցիության հետ , գլխավորելով ամբողջ գյուղացիու-
թյունը :

Ցարական-կալվածատիրական տիրապետության
տապալման մեջ շահագորդոված եր ամբողջ գյուղա-
ցիությունը , նրա բոլոր խավերն՝ առանց բացառու-
թյան , վորի թվում նաև կուլակությունը , վորը հույս
ուներ իր ձեռքը ձգել կալվածատիրական հողը : Այդ
պատճառով կուլակը նույնպես միապետական-կալվա-
ծատիրական հասարակակարգի դեմ եր գուրս գալիս ,
թեև դուրս եր գալիս տատանումներով , ցանկություն
ունենալով մի կերպ իր դասակարգային շահերը հաշ-

տեցնել ցարական-կալվածատիրական հասարակարգի
հետ և գործարք կնքել նրա հետ :

Այդ շրջանում բանվոր դասակարգն ընթանում եր ,
ինչպես ասում ե ընկ . Ստալինը , «ամբողջ գյուղա-
ցիության հետ՝ ընդդեմ միապետության , բուրժուա-
զիայի չեղոքացման պայմաններում , դեմոկրատական
հեղաշրջման համար» : Միանդամայն այլ եր գրությու-
նը պրոլետարական հեղափոխության շրջանում :

Կուլակն , իհարկե , շահագորդոված չեր սոցիալս-
տական հեղափոխության մեջ , պրոլետարիատի գիշ-
տատուրա հաստատելու մեջ : Զե վոր պրոլետարական
հեղափոխությունն ուղղված ե վոչ միայն քաղաքացին
բուրժուազիայի դեմ , այլև գյուղական բուրժուազիա-
յի դեմ , այսինքն՝ կուլակի դեմ :

Բուրժուական-դեմոկրատական հեղափոխությու-
նից հետո կուլակը դառնում ե պրոլետարական հեղափո-
փոխության անմիջական թշնամին , վորի դեմ պետք ե
անմիջորեն ուղղվեր բանվոր դասակարգի և աշխատա-
վոր գյուղացիության պայքարը : Առանց կուլակի դեմ
մղած այդ պայքարի անհնար եր սկայքարը պրոլետար-
կան հեղափոխության համար :

Միջակը , վորը կազմում ե գյուղացիության հիմ-
նական մասսան , այս շրջանում ցուցաբերում ե զետքի
տատանում և անկայունություն : Այդ բացատրվում ե
գյուղացու յերկրնությամբ — նա մի կողմից շահա-
գործվող աշխատավոր ե , մյուս կողմից՝ մանր-սեփա-
կանատեր : Այդ պատճառով Վլադիմիր Իլլիչը սովո-
րեցնում եր , վոր՝

«Պրոլետարիատը պետք ե սոցիալիստական հեղա-
շրջում կատարի , իրեն միացնելով բնակչության կի-
ուապրոլետարական տարրերի մասսաներին , վորպեսպի-

«Եժով՝ ջախջախի բուրժուազիայի դիմադրությունը և չեղոքացնի դյուլացիության ու մանր-բուրժուազիայի անկայունությունը»:

